RYDENA
AEROSPACE COMPOSITE MATERIALS

# *ՏԱՆՈՒՅՈՒՄ*

## Նախատեսվող գործունեության և դրա բնապահպանական ռիսկերի վերաբերյալ

Կազմված է ըստ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների.

### 1. Նախաձեռնողի անունը (անվանումը) եւ բնակության (գտնվելու) վայրը.

Ներկայացվող գործունեության նապաձեռնող է՝ «Ռայդենա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ):

Ընկերության գրանցման հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Արաբկիր, Ազատության պողոտա 1/21, 0014:

Նախատեսվող գործունեության հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Հ. Մանանդյան փողոց 33/27:

### 2. Նախատեսվող գործունեության անվանումը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝ *«Ածխածնային և ապակյա ամրացնող նյութերի հիման վրա էպոքսիդային պրեպրեգների արտադրություն»*, որը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ կետի (Ա կատեգորիա) 3) ենթակետի (քիմիական արդյունաբերություն) հետևյալ մասի՝ «զ. օրգանական կամ անօրգանական նյութերի կամ դրանց խառնուրդների արտադրություն կամ վերամշակում» դասակարգմանը:

### 3. Գործունեության նպատակը և համառոտ նկարագիրը

#### 3.1. Գործունեության նպատակը

Գործունեության նպատակն է կազմակերպել բարձր պահանջարկ ունեցող կոմպոզիտային պրեպրեգ նյութի բարձր տեխնոլոգիական արտադրություն, որն օգտագործվում է բարձր տեխնոլոգիական և տեխնոլոգիապես բարդ

արտադրատեսակների ու կառուցվածքների արտադրության մեջ, այդ թվում՝ էլեկտրատեխնիկական բնագավառում:

Պրեպրեգները (անգլերեն՝ *pre-preg*, առաջացել է *pre-impregnated* - նախապես ներծծված բառից) կոմպոզիտային նյութեր են, որոնք պատրաստվում են ամրացնող մանրաթելային գործվածքներից կամ ժապավեններից, նախապես ներծծված պոլիմերային կապակցանյութով՝ ընդ որում ոչ լիարժեքորեն պնդացած վիճակում:

Պրեպրեգների պահանջարկը պայմանավորված է դրանց բարձր դիէլեկտրիկ և մեխանիկական հատկություններով:

### 3.2. Գործունեության համառոտ նկարագիրը

Սույն նախաձեռնության շրջանակներում «Ռայդենա» ընկերությունը նախատեսում է Երևան քաղաքի Մանանդյան փողոց 33/27 հասցեում գտնվող արտադրական տարածքում տեղադրել պրեպրեգների արտադրության համար անհրաժեշտ սարքավորումները: Տարածքը ապահովվել անհրաժեշտ ենթակառուցվածներով և շինություններով:

*3.2.1. Հումք*

- Էպօքսիդային խեժ, կարծրացուցիչ, կատալիզատոր, մոդիֆիկատորներ և այլ բաղադրիչներ՝ համաձայն տեխնոլոգիական կանոնակարգի:

· Ամրացնող նյութեր՝ ածխածնային մանրաթելային գործվածքներ, ապակեպլաստե գործվածքներ և ածխածնային մանրաթելեր:

· Սիլիկոնացված թուղթ՝ կապող թաղանթը ձևավորելու և տեղափոխելու համար:

· Պոլիէթիլենային թաղանթ և այլ պաշտպանիչ թաղանթներ՝ ըստ արտադրատեսակների տեխնիկական բնութագրերի:

· Գլանափաթեթավորման համար նախատեսված ստվարաթղթե միջուկներ:

· Պատրաստի արտադրանքի փաթեթավորման նյութեր:

*3.2.2. Տեխնոլոգիական գործընթացներ*

Պրեպրեգների արտադրությունն իրականացվում է հետևյալ սխեմայով.

- հումքի ընդունում և պահեստավորում,
- բաղադրիչների պատրաստում,

- էպօքսիդային կապակցանյութի պատրաստում (խառնման գիծ),
- կապակցանյութի թաղանթի ձևավորում (թաղանթի գիծ),
- պրեպրեգի արտադրություն (պրեպրեգի գիծ),
- անհրաժեշտության դեպքում երկայնական կտրում/վերափաթաթում (կտրող/վերափաթաթող սարք)
- որակի հսկողություն – մակնշում – փաթեթավորում – պատրաստի արտադրանքի պահեստավորում – առաքում:

## 4. Գործունեության բնապահպանական բաղադրիչը

Արտադրական գործունեությունն իրականացվում է բնապահպանական անվտանգության պահանջներին համապատասխան և ներառում է բնապահպանական հիմնական ցուցանիշների, այդ թվում՝ արտանետումների, թափոնների, աղմուկի և թրթռումների համապատասխան վերահսկողություն:

### *4.1. Մթնոլորտային օդ*

Ներկայացվող գործունեության ընթացքում մեծածավալ արտանետումներ չեն սպասվում:

Օրգանական նյութերի մեխանիկական և ջերմային մշակման ընթացքում հնարավոր է ցնդող օրգանական միացությունների (հիմնականում՝ սահմանային ածխաջրածինների) առաջացում:

Սահմանային ածխաջրածինների համար մթնոլորտային օդում կոնցենտրացիաների նորմատիվը սահմանված է 1,0 մգ/մ$^3$ մակարդակում:

Հաշվի առնելով տեխնոլոգիական գործընթացների բնույթը, այդ թվում՝ մեխանիկական մշակման ինտենսիվությունը և կիրառվող ջերմային ռեժիմների համեմատաբար ցածր ջերմաստիճանները, ինչպես նաև նախատեսվող սարքավորումների տեխնիկական բնութագրերը և եվրոպական չափանիշներին համապատասխանությունը՝ ակնկալվում է, որ ցնդող օրգանական միացությունների առաջացման և դրանց հնարավոր արտանետումների ծավալները կլինեն աննշան վերոնշյալ թույլատրելի մակարդակի համեմատությամբ:

### *4.2. Արտադրական հոսքաջրեր*

Ներկայացվող գործունեության ընթացքում արտադրական նպատակով ջուրը կօգտագործվի անհպում հովացման կամ սարքավորումների լվացման համար: Այդ նպատակների համարը ջրապահանջը կլինի աննշան և աղտոտված արտահոսք չի առաջանա:

### *4.3. Արտադրական թափոններ*

Ներկայացվող տեխնոլոգիան թույլ է տալիս գործնականում ամբողջությամբ օգտագործել հումքատեսակները: Որոշակի շեղումների դեպքում, ստանդարտներին չհամապատասխանող արտադրատեսակները կարող են նույն սարքավորումների վրա կրկնակի օգտագործվել և վտանգավոր մնացորդների կամ թափոնների առաջացում չի սպասվում:

### *4.4. Աղմուկ և թրթռում*

Նախատեսվող սարքավորումները թրթռման աղբյուր չեն պարունակում:

Նշված սարքավորումներին բնորոշ աղմուկի մակարդակը չի կարող գերազանցել արտադրական տարածքների համար սահմանված 80 դԲա սահմանը, իսկ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ սարքավորումները տեղադրվելու են փակ շինությունների մեջ; բնակելի տարածքների վրա ներկայացվող գործունեությունը որևէ ազդեցություն չի կարող ունենալ:

## 5. Բնապահպանական միջոցառումներ և մոնիթորինգ

Ելնելով ներկայացվող գործունեության բնույթից, բնապահպանական միջոցառումները հիմնականում նպատակաուղղված կլինեն տեխնոլոգիական պրոցեսների կառավարման արդյունավետության բարձրացման և տեխնոլոգիական ռեժիմների անխափան իրագործման ապահովմանը: Կարևոր դեր կունենա հումքի որակի վերահսկողությունը:

Մոնիթորինգի միջոցառումները հիմնականում կներառեն տարածքի ֆոնային աղտոտվածության չափումները: Դրանք կարող են լինել եռամսյակային պարբերականությամբ, ինչպես նաև արտակարգ իրավիճակների դեպքում:

## 6. Նախատեսվող գործունեության իրականացման վայրը:

Նախատեսվող գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Մանանդյան փողոց, 33/27: Տարածքը դեռ ԽՍՀՄ ժամանակից գտնվել է արդյունաբերական գոտու սահմաններում:

RYDENA
AEROSPACE COMPOSITE MATERIALS

Տարածքը վարձակալության իրավունքով տնօրինվում է «Ռայդենա» ՍՊԸ կողմից: Տարածքի ցուցանիշները.

- Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0693-0156
- Մակերեսի չափը (հա)՝ 0.08
- Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների:

Տարածքի շրջակայքում առկա են տարբեր արտադրական տարածքներ, ինչպես նաև բնակելի շենքեր:

Գործունեության կարևոր նախապայմաններից է սանիտարապաշտպանական գոտու հստակ որոշումը և ապահովումը:

Սանիտարապաշտպանական գոտիների չափերը սահմանվում են ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 նորմատիվով: Ըստ այդ նորմատիվի.

*«պլաստմասսայից և սինթետիկ խեժերից արտադրանքի արտադրություն (մեխանիկական մշակում)»* գործունեության տեսակը հանդիսանում է V դասի գործունեություն, որի համար սանիտարապաշտպանական գոտին արտանետման աղբյուրից սահմանված է 50 մետր, ինչն ներկայացվող նախագծային լուծումների դեպքում ապահովված է:

ՌԱՅԴԵՆԱ ՍՊԸ
Գլխավոր տնօրեն՝ Դմիտրի Կոզան

«ՌԱՅԴԵՆԱ»
"RYDENA"
08272865